ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԱՐԶ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/13

ք. Երևան «21» 10 2025թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արխիտեկտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ն. Սիրեկանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է "Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության և «Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 նիշով ճեմուղու նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Պատվիրատուին վճարել տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Կատարողի կողմից ներկայացված կատարողականները Պատվիրատուն կարող է ուսումնասիրել 20 օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալուց համալիր փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը ներառյալ:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-

ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում, այդ թվում եթե պետական համալիր փորձաքննության արդյունքներով տրվում է եզրակացություն «Նախագիծը վերադարձվում է լրամշակման» ձևակերպմամբ, Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 10 (տաս) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և

արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Արխիտեկտ» ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ք. Գյումրի, Շիրակացի փող., 83 շ., բն. 40
կառավարական տուն 3	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2052822337461001
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 05547385
Հ/Հ 900011059657	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Գ. Եղիազարյան	_____ Լ. Միրեկանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
21 .10 .2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/13 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը
1	50531140/58	ՀՀ դրամ	1 000 000	1	ՀՀ	Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին ամբողջական լրակազմով տրամադրելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1	**Քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման բնութագիրը**
	ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման երկրորդ կետով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգին համապատասխան
2	**Կատարման ենթակա աշխատանքների անվանումը**
	Պատվիրատուի կողմից ներկայացվող նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջ փաթեթի քաղաքաշինական պարզ փորձաքննության իրականացում
3	**Նախագծի փորձաքննության ենթակա փաստաթղթեր**
	• նախագծի ճարտարապետական մաս, • նախագծի ինժեներական բաժինները՝ • արտաքին լուսավորություն, • համայնապատկերային վերելակ դեպի Սևանավանք /համապատասխան ենթակառուցվածքներով/, • ճեմուղու միջնամասում դիտահարթակ /համապատասխան ենթակառուցվածքներով/, հանգույցների կոնստրուկտիվ լուծումները (հենապատեր, ճանապարհային ծածկույթի շերտեր, դիտահարթակներ և այլն),
4	**Տեխնիկական առաջադրանք՝ համաձայն** ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի
5	Օբյեկտի շինարարական աշխատանքների ընթացքում, հիմնավոր անհրաժեշտությունից ելնելով, Պատվիրատուի կամ Հեղինակի ներկայացմամբ տվյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխությունների փաթեթը ենթակա է պարզ փորձաքննության Ընկերության կողմից անհատույց, իսկ այդ փոփոխությունների ընդհանուր արժեքը չի կարող ավել լինել տվյալ օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքի 15%-ից: Սահմանված սահմանաչափը գերազանցող փոփոխությունների փաթեթի լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել լրացուցիչ ֆինանսավորման դեպքում, եթե կողմերը այլ գրավոր համաձայնության չեն գալիս:
6	Հիմնավորում — ՀՀ կառավարության 2025 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1158-Ն որոշում
7	Ծառայության մատուցման ժամկետը

	Սկիզբը	Ավարտը
	Ծառայության սկիզբը համարվում է Պատվիրատուի կողմից նախագծանախա	Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Ընկերությանը ամբողջական լրակազմով տրամադրելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օր: Ընդ որում, այն պարագայում երբ • պարզ փորձաքննության արդյունքով տրվում է եզրակացություն «Նախագիծը վերադարձվում է լրամշակման» ձևակերպմամբ, նախագծող կազմակերպության կողմից լրամշակումն իրականացնելուց հետո, կատարողը

	հաշվային փաստաթղթերը Ընկերությանը ամբողջական լրակազմով տրամադրելու օրվան հաջորդող օրը	/փորձաքննությունն իրականացողը/, սույն պայմանագրի շրջանակներում անհատույց պարտավորվում է իրականացնել կրկնակի փորձաքննություն՝ 3 օրյա ժամկետում: • պետական համալիր փորձաքննության արդյունքներով տրվում է եզրակացություն «Նախագիծը վերադարձվում է լրամշակման» ձևակերպմամբ, նախագծող կազմակերպության կողմից նախագծի լրամշակումն իրականացնելուց հետո, կատարողը /փորձաքննությունն իրականացողը/, սույն պայմանագրի շրջանակներում անհատույց պարտավորվում է իրականացնել կրկնակի փորձաքննություն՝ 3 օրյա ժամկետում:
8	**Նախագծային փաստաթղթերի պարզ քաղաքաշինական փորձաքննության ծառայությունները պետք է իրականացվեն հետևյալ լիցենզիայի ներդիրների շրջանակներում**	
	ԼԻՑԵՆԶԻԱ (<Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք)	
	1-ԻՆ ԴԱՍԻ ԼԻՑԵՆԶԻԱ **Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)**	
	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N 15-Ն հրաման *(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)*	
	• **ճարտարապետություն (բացառությամբ պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների վերակառուցման և վերականգնման)** • **բնակելի, հասարակական, արտադրական կառույցներ** • **Էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորության ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ)** • **ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա)**	
9	**ԱՅԼ ՊԱՀԱՆՋ**	
	- **Ընկերության կողմից պայմանագրային արդյունքներիը կատարելուց հետո, ներկայացվելիք եզրակացության հետ միաժամանակ պետք է ներկայացնել նաև կազմակերպության լիցենզիան և անհրաժեշտ բոլոր ներդիրները** - **Ընկերության կողմից տրված եզրակացությունը պետք է հաստատվի ընկերության ղեկավարի, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերի ենթաբաժնինները փորձաքննության անցկացրած՝ ընկերության լիցենզիայի ներդիրներում ներառված անձանց կողմից**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011059657
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Արխիտեկտ» ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փող., 83 շ., բն. 40
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822337461001
ՀՎՀՀ 05547385

Տնօրեն՝

_____ Ն. Սիրեկանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
21 .10 .2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/13 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/58	“Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության և «Հարսնաքար» հանգստի գոտուց մինչև Սևանի թերակղզի հատվածի՝ 2.8 կմ երկարությամբ և 6.5 մ լայնությամբ 1902.0-1902.5 նիշով ճեմուղու նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննություն	-	-	-	-	-	-	-	-	-	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011059657
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ե. Եղիազարյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Արխիտեկտ» ՍՊԸ
ք. Գյումրի, Շիրակացի փող., 83 շ., բն. 40
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822337461001
ՀՎՀՀ 05547385
Տնօրեն՝

_____ Ն. Սիրեկանյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
21 .10 .2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/13 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
21.10.2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/13 գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
21 .10 .2025 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/13 գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԶՆՄԱՐՄԱԳՐԻ ՄՈԴՈՐԲԱԳԻՐ N 006961 [1687276762]

PAYMENT ORDER RECEIPT

Կոնվերս բանկ ՓԲԸ «Նոր Նորք» մասնաճյուղ

ՊԿ\ID 1872

Ամսաթիվ\Date 20/10/25 14:14

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1930030206282300	900008000664	AMD 100,000.00

Վճարող\Remitter
ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ
Վճարողի բանկ\Remitter's Bank
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code **9905547385**

Շահառու\Beneficiary
Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով
Շահառուի բանկ\Beneficiary's Bank
ՀՀ ԿԲ գործ.վարչություն /ՀՀ ֆինանս. նախ.

Հիմնական պարտապանի տվյալներ\Debtor's data
Անուն\Name
«ԱՐԽԻՏԵԿՏ»
ՀՎՀՀ\Tax Code **21 05547385**

Վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ\Base document of payment
Փաստաթղթի տեսակ\Document Type
Այլ\Other
Նկարագրություն\Description
ծածկագրով պայմանագրի ապահովում

Գումարը բառերով\Amount in Words
Մեկ հարյուր հազար դրամ
Նպատակ\Details
ՀՀՔԿ-ՀՄՄԵԶԲ-25/13 ծածկագրով պայմանագրի ապահովում

	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission
Գանձում I\Commission I	1930030206282300	AMD 500.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Հինգ հարյուր դրամ
Կատարող\Maker **Արմենուհի Գասպարյան**

Ս.Տ.
ST.

Հարգելի հաճախորդ, Ձեր հաշիվների քաղվածքները ստանալու և/կամ ստացման եղանակը փոխելու նպատակով կարող եք դիմել Բանկի սպասարկող աշխատակիցներին

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Converse Bank CJSC PID 1872 20 OCT 2025 Accepted Armenuhi Gasparyan

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ MARZ SHIRAK LIMITED LIABILITY COMPANY «ԱՐԽԻՏԵԿՏ» "АРХИТЕКТ" "ARCHITECT" 05547385

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԶՆՄԱՐՄԱԳՐԻ ՄՈԴՈՐԲԱԳԻՐ N 006958 [1617529977]

PAYMENT ORDER RECEIPT

Կոնվերս բանկ ՓԲԸ «Նոր Նորք» մասնաճյուղ

ՊԿ\ID 1872

Ամսաթիվ\Date 20/10/25 14:10

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1930030206282300	900008000698	AMD 150,000.00

Վճարող\Remitter
ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ
Վճարողի բանկ\Remitter's Bank
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code **9905547385**

Շահառու\Beneficiary
Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձևով, ՀՀֆիանսների նախարարություն
Շահառուի բանկ\Beneficiary's Bank
ՀՀ ԿԲ գործ.վարչություն /ՀՀ ֆինանս. նախ.

Հիմնական պարտապանի տվյալներ\Debtor's data
Անուն\Name
«ԱՐԽԻՏԵԿՏ»
ՀՎՀՀ\Tax Code **21 05547385**

Վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ\Base document of payment
Փաստաթղթի տեսակ\Document Type
Այլ\Other
Նկարագրություն\Description
ծածկագրով պյմ որակավորման ապա

Գումարը բառերով\Amount in Words
Մեկ հարյուր հիսուն հազար դրամ
Նպատակ\Details
ՀՀՔԿ-ՀՄՄԵԶԲ-25/13 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում

	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission
Գանձում I\Commission I	1930030206282300	AMD 500.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Հինգ հարյուր դրամ
Կատարող\Maker **Արմենուհի Գասպարյան**

Ս.Տ.
ST.

Հարգելի հաճախորդ, Ձեր հաշիվների քաղվածքները ստանալու և/կամ ստացման եղանակը փոխելու նպատակով կարող եք դիմել Բանկի սպասարկող աշխատակիցներին

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Converse Bank CJSC PID 1872 20 OCT 2025 Accepted Armenuhi Gasparyan

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ MARZ SHIRAK LIMITED LIABILITY COMPANY «ԱՐԽԻՏԵԿՏ» "АРХИТЕКТ" "ARCHITECT" 05547385